ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

«ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ» ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

19 Մայաթ Նովա, Երեւան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

«Դեպի Եվրոպա» մարտահրավերը, կարծես, ամենաընդգրկունն ու արդիականն է մնում այսօրվա Հայաստանում: Հաճախ հնչող հարցը, թե երբ Հայաստանը կհամապատասխանի եվրոպական չափանիշներին, պատասխան չունեցող հարցերի շարքին կարելի է դասել: Իսկապես, ե՞րբ, որքա՞ն ժամանակում է հնարավոր Հայաստանի ներկա սոցիալ-քաղաքական պահավիճակը վերափոխել և համապատասխանեցնել նպատակադրվածին, ի՞նչ ծավալի և ինչպիսի՞ փոփոխությունների միջով հարկ կլինի անցնել, կհերիքի՞ կամքն արդյոք, միայն ժամանակը ցույց կտա: Մի բան պարզ է. վերջին խորհրդարանական ընտրությունները ոչ միայն ենթադրվող վերջակետը չդրեցին եվրամիտման ճանապարհին, այլ ճիշտ հակառակը՝ նոր խթան կարող են դառնալ այս ուղղությամբ առավել ակտիվ աշխատանքի համար:

Պետական կառավարման եվրոպական սկզբունքները

Եվրոպական կառավարման տեսլականը ենթադրում է երեք հիմնական սկզբունք, որոնք նաև փորձագետների կարծիքով նոր անդամ երկրների համար այսօր անկյունաքարային մարտահրավերներ են դարձել: Այդ սկզբունքներն են.

1. *մրցակցային քաղաքականություն, որը ենթադրում է կառավարող էլիտաների փոփոխելիություն:* Այսինքն երկրում պիտի ստեղծվեն պայմաններ, պիտի կայանա մի միջավայր, որտեղ կառավարող էլիտաները կարող են և փոխվում են. մի բան, որի ուղղությամբ ծանր ու երկար ճանապարհ ունենք, թերևս, անցնելու:
2. *արդյունավետ ու ամուր քաղաքացիական ծառայության համակարգ և ապաքաղաքականացված բյուրոկրատիա:*
   Եթե ձևի առումով այս ուղղությամբ Հայաստանը նկատելի քայլեր արդեն իսկ արել է, ապա բովանդակության տեսանկյունից, կարծես, քիչ բան է փոխվել:
3. *անկախ արդարադատության համակարգ:*

Նշված երեք սկզբունքների համակարգված համապատասխանության պայմաններում է միայն համարվում, որ այս կամ այն երկրի պետական կառավարման համակարգը նույնական է Եվրոպականին: Մի խնդիր, որ այսօր գերխնդիր է Ռումինիայի, Բուլղարիայի և նոր անդամ մյուս երկրների համար:

Պատկերացնել կարելի է, թե դեպի «պետական կառավարման եվրոպական չափանիշներ» ճանապարհի ո՞ր հատվածում է Հայաստանն այսօր:

Մարդու իրավունքներ և ժողովրդավարություն

ՀՀ Ազգային ժողովի մայիսի 12-ի ընտրությունները և դրան հաջորդող ժամանակահատվածում արձանագրված զարգացումները վկայեցին, որ հատկապես այս բնագավառն է վաղ թե ուշ դառնալու դեպի Եվրոպա ճանապարհին մեր ընթացքը դանդաղեցնող հիմնական ուղղություններից մեկը: Եվ խնդիրն այստեղ ամենևին էլ կարծես օրենսդրական դաշտի կատարելագործման հարթությունում չէ:

Խոսքի ազատության բնագավառում դեռևս առկա լրջագույն խնդիրները, արձանագրվող աղմկահարույց հանցագործությունների ֆոնին խորացող հանրային ընկճվածության մթնոլորտը, իրավապահ մարմինների գործունեության հանդեպ թերահավատության և վախի ավելացմանը նպաստող վերջին դեպքերը

և այսօրինակ բազմաթիվ այլ խնդիրներ նպաստում են, որ հետընտրական Հայաստանում հետընթաց արձանագրվի հանրային գիտակցության և մարդկանց նախատրամադրվածությունների բնագավառում: Մայիսի 12-ի ընտրություններին հաջորդող ժամանակահատվածի Հայաստանում հանրային հոգեբանության մեջ «Եվրոպան» տեղի է տալիս, այնինչ, թերևս, հակառակը պիտի լիներ:

Չի՛ կարելի կանգնել

Մայիստասներկուսյան ընտրություններից հետո Հայաստանը մի փոքր այլ Հայաստան է այլևս: Համենայն դեպս այդպես ընկալվում է՝ դրսում, թե ներսում: Դեպի ժողովրդավարություն արված քայլի ամրագրումն ուներ քաղաքական և հոգեբանական նշանակություն: Դրա քաղաքական, աշխարհաքաղաքական ու տնտեսական հետևանքների մասին կարելի է երկար խոսել, և հատկապես կարևոր է, թե ապագայում այն ինչպես կօգտագործվի քաղաքականություն իրականացնողների կողմից. կախված դրանից՝ ձեռքբերածը ժամանակի ընթացքում կարող է պարզապես խամրել, կամ ակտիվորեն աշխատել հօգուտ:

Շատ ավելի կարևոր է այս պահին խնդրի հոգեբանական կողմը: Մի բան է, որ ի լուր աշխարհի հռչակվում է Հայաստան երկրում դիտարկվող դրական փոփոխությունների մասին, այլ բան՝ թե որքանով է դա վերաճում ոգևորության բուն երկրի ներսում: Դառնու՞մ է այն սեփական ուժերի հանդեպ վստահության բարձրացման վճռորոշ խթան, ներարկվու՞մ է արդյոք իբրև կորսված հավատի վերականգնման դեղալուծույթ, դառնու՞մ է առաջին լուրջ քայլը հազարամյոն ճանապարհին. սա է, որ ավելի կարևոր է: Չէ՞ որ երբ շարքային հայաստանցին հավատա, որ մենք իսկապես կարող ենք և ունակ՝ դառնալու քաղաքակիրթ ժողովրդավարություն, էլ ոչինչ անհասանելի չի լինի այդ նույն ճանապարհին:

Իսկ հանրային հոգեբանական վերելքն ինքնին չի կարող իրականանալ դիսկրետ կամ միանգամյա սնունդով. ինքնածավալվող օրգանիզմի պես այն անընդհատ ու բավարար կերակրի կարիք ունի: Չկանգնել ու քամու բերան չտալ արդեն իսկ արվածը. սա է միակ տրամաբանականն այս պահին:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2007թ-ի մայիսի 25-ին կայացած՝ «Արդի զարգացումներ Եվրոպական հարևանության ծրագրի շրջանակում» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ: